տոնել Մայիս 28–ը· «Թո՛ղ Մայիս 28–ի օրը լինի զոհերի յիշատակին, բայց և համազգային մեծ ուրախութեան օր, — օ՛ր նոր պետութեան ստեղծման բիբլիական Արարատի շուրջը, օ՛ր ազգային բարձր իղձերի և համաշխարհային արդարութեան յաղթանակի»:

Նախարարների Խորհրդի մայիս 27–ի նիստում, որին ներկայ էին Ա· Խատիսեանը, զօր· Արարատեանը, Ս· Մանասեանը, Բր· Վերմիշեանը, Ս· Թորոսեանը, Գ· Մելիք–Ղարագէոզեանը, Ց· Ջմշկեանը և ուրիշներ, լուսեց վարչապետի զեկուցումը այն բոլոր ձեռնարկների մասին, որոնք կատարուել էին Հայաստանի անկախութեան տարեդարձի օրը միութեան յայտարարութիւնը անելու համար և կարդացուեց յայտարարութեան նախագիծը: Կառավարութիւնը հաւանութիւն տուեց արուած աշխատանքին, որոշեց, Հայ· Խորհրդի ապր· 27 օրէնքի հիման վրա, հաստատել յայտարարութեան նախագիծը և յանձնարարեց վարչապետին հրապարակել: Որոշեց նաև «հրաւիրել Հայաստանի Խորհրդի նիստերին մասնակցելու, որպէս Խորհրդի անդամներ, Արևմտահայ Գործադիր Մարմնի 12 անդամներին»*):

Նոյն նիստում քննուեց հանրային կրթութեան նախարար Գ· Մելիք–Ղարագէոզեանի առաջարկը՝ Հայաստանի անկախութեան և միութեան յայտարարութիւնը յաւէրժացնելու համար 1) մայրաքաղաքում յուշարձան կանգնեցնել հայ ազատամարտում ընկած հերոսներին ի յիշատակ և այդ նպատակով կազմել հիմնադրամ՝ կառավարութեան կողմից յատկացնելով 100,000ռ· և 25,000ռ· էլ արձանի մրցանակաբաշխութեան համար· 2) հրատարակել հայկական ազատագրութեան վերջին շրջանի պատմութիւնը, որի համար տրամադրել 285,000ռ·, 3) բաց թողնել առանձին շքանշան «Հայրենիքին մատուցած ծառայութիւնների համար» մակագրութեամբ: Այս առաջարկն ևս հաստատուեց միաձայնութեամբ:

Երկու օր յետոյ, մայիս 28–ին, Հայաստանի Խորհրդի հանդիսաւոր նիստում կատարուեց Հայաստանի միութեան և անկախութեան յայտարարութիւնը:

Այդ օրը Երևանը ստացել էր տօնական կերպարանք: Ամբողջ քաղաքը զարդարուած էր դրօշակներով, գորգերով, կանաչներով ու ծաղիկներով: Վաղ առաւօտանից փողոցները լիքն էին բազմութիւններով: Շրջակայ գիւղերից քաղաք էին գալիս խումբ–խումբ գիւղացիներ, պատգամաւորութիւններ դրօշակներով՝ հանդէսներին մասնակցելու համար:

Առաւօտեան, քաղաքային ինքնավարութեան շէնքի ընդարձակ հրապարակում տեղի ունեցաւ հոգեհանգիստ հայրենիքի ազատութեան համար զոհուածների յիշատակին, ապա՝ մաղթանք և զօրահանդէս: Հրապարակն ու մօտակայ փողոցները բռնուած էին ծովածաւալ բազմութեամբ, զօրքով, դպրոցական աշակերտներով, որբերով: Մէջտեղը տեղաւորուած էին Հայ· Խորհրդի ու կառավարութեան անդամները, բարձր հրամանատարութիւնը՝ զօր· Նազարբէգեանի գլխաւորութեամբ, զօր· Դևին, Պարսկաստանի, Ազրբ-

*) Քաղուածք նախարարների խորհրդի 1919թ· մայիս 27–ի նիստի արձանագրութիւնից: